ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հոկտեմբերի 2015թ. թիվ 313-Ա

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ
ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ -728 հրամանագրի 1.16 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1515-Ն որոշումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի 09 բաժնի 06 խմբի 01 դասի «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» հոդվածով մարզին հատկացված 8311.8 հազար (ութ միլիոն երեք հարյուր տասնմեկ հազար ութ հարյուր) դրամ գումարը բաշխել մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներին՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ա.Մանուկյանին՝

Մարզային ենթակայության ՊՈԱԿ-ների տնօրենների հետ (համաձայն հավելվածի) կնքել նպաստների հատկացման պայմանագրեր:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանի և մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. հոկտեմբերի 12
ք.Վանաձոր